ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 122-Ա

« 20 » ՄԱՅԻՍ 2022Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՈՑ ՁՈՐ-1, ՎԱՅՈՑ ՁՈՐ-2, ՎԱՅՈՑ ՁՈՐ-3, ՎԱՅՈՑ ՁՈՐ-4, ՎԱՅՈՑ ՁՈՐ-5, ՎԱՅՈՑ ՁՈՐ-6 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾՄԱՆ ՄԱՍՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդվածի 8.1-րդ մասի 2-րդ ենթակետով, 14.4-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետի, 7-րդ կետի և 61-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 26-ի դրական եզրակացությունները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով կատարված ՀՀ Վայոց ձորի մարզի Վայոց ձոր-1, Վայոց ձոր-2, Վայոց ձոր-3, Վայոց ձոր-4, Վայոց ձոր-5, Վայոց ձոր-6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը՝ տարածքային հատակագծման մասով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

5/20/2022

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր